

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
հաշմանդամություն ունեցող անձանց
հարցերով զբաղվող մարզային
հանձնաժողովի նիստ 9.09.2014թ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N3

Տեղի ունեցավ հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նիստ՝ հանձնաժողովի նախագահ ՀՀ Արագածոտնի մարզպետ Ս Սահակյանի ղեկավարությամբ:

Օրակարգ

1. Մարզի հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության հիմնահարցերի մասին

Զեկուցող՝ հանձնաժողովի քարտուղար Գ. Դանիելյան

Մասնակցում էին հանձնաժողովի անդամներ՝

Գ. Դանիելյան—արզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ:

Ս. Պետրոսյան-- մարզպետարանի աշխատակազմի կրթության բաժնի պետ/վարչության պետին փոխարինող/:

Ա. Դավայան-- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ

Ս. Զորյան-- մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

Ս. Թադևոսյան -- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ /վարչության պետին փոխարինող/ :

Ա. Մովսիսյան-- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ:

Ա. Հովհաննիսյան-- <<Ծիծեռնակ>> հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպության նախագահ:

Ժ. Ավետիսյան--<<Արայի>> հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպության հախագահ:

Հրավիրվածներ՝

Ս. Առաքելյան-- մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ,

Ա. Արգարյան –<<Թալին-հույս>> ՀԿ-ի նախագահ
Ա. Պապիկյան–<< Կանթեղ Արագածի>> ՀԿ-ի նախագահ
Գ.Աղաբաբյան-Աշտարակի թ.1 ՀԳԴ-ի տնօրեն

Քննարկվող հարցի վերաբերյալ զեկուցմամբ հանդես եկավ հանձնաժողովի քարտուղար, մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ տ-ին Գ.Դանիելյանը: Նա նշեց, որ բաժինը համագործակցելով ՏԻՄ-ի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների, առողջապահական կառույցների, հանրակրթական դպրոցների տնօրենների հետ ,աշխատանքներ է տարել կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և կրթության մեջ ընդգրկելու ուղղությամբ:

Մարզում բնակվում են մանկուց հաշմանդամ 397 երեխաներ:

Հանրակրթությունից դուրս մնալու հիմնական պատճառներից են երեխաների առողջական /ֆիզիկական կամ մտավոր/ խնդիրները, ընտանիքի սոցիալական վիճակը:Աշխատանքներ են տարվել նաև ծնողների իրավագիտակցության բարձրացման ուղղությամբ: Համապատասխան մասնագետներ՝ հոգեբան, հատուկ մանկավարժ ,լոգոպեդ չունենալը հնարավորություն չի տալիս հատուկ կարիքներով երեխաների կրթությունը հանրակրթական դպրոցներում կազմակերպելու համար:

Ընթացիկ տարում աշխատանքներ են տարվում մարզում ներառական կրթությամբ դպրոցներ ունենալու համար:Ներառական կրթությամբ ուսուցում կազմակերպելու համար ցանկություն են հայտնել մարզի 5 դպրոց՝ Աշտարակի N 3 և ավագ դպրոցները, Թալին քաղաքի N1 և N2 հիմնական և Մաստարայի միջնակարգ դպրոցը:Նրանց ցույց է տրվում անհրաժեշտ խորհրդատվություն այդ գործընթացը կազմակերպելու համար:

Մարզում գործում է մեկ հատուկ դպրոց՝ Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոցը,որը նախատեսված է միջին և ծանր մտավոր խնդիրներով երեխաների կրթության համար: Մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կողմից հաշվառվել է կրթությունից դուրս մնացած 12 երեխա: 2014թ. ընթացքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 14 երեխա վկայագրվել և սովորում են հանրապետության տարբեր դպրոցներում:

Առողջական խնդիրների պատճառով կրթությունից դուրս մնացած երեխաներին աջակցելու նպատակով նրանց ծնողների հետ տարվում են խորհրդատվական, բացատրական և սոցիալական աջակցության աշխատանքներ:Դրանց արդյունքում նրանք ուղեգրվել են Օշականի և Նորագյուղի մանկական վերականգնողական կենտրոններ :Այս տարվա ընթացքում Կոշի նորակառույց առաջնային բուժօգնության կենտրոնում բացվել է մանկական վերականգնողական կենտրոն, որն ունի ժամանակակից տեխնիկական միջոցներ և խնամքի համար լավագույն պայմաններ:Պետք է աջակցող քայլեր ձեռնարկել մարզի երեխաներին նորաբաց կենտրոն ուղղորդելու համար:

Առողջական խնդիրների լուծմանը զուգընթաց աշխատանքներ պետք է կատարվեն նաև նրանց կրթության գործը կազմակերպելու համար:

Հաշմանդամություն ունեցող երեխաների համար կրթությունը մատչելի դարձնելու ուղղությամբ դեռևս կան չլուծված հարցեր:

Մարզի հանրակրթական հաստատություններում դեռևս չի արմատավորվում հոգեբան, սոցիալական աշխատող,լրգուպեդ կամ հատուկ մանկավարժ մասնագետներ ունենալու հարցը:

Դպրոցների մեծ մասում բացակայում են թեքահարթակները, սանհանգույցները հարմարեցված չեն:

Հարցի քննարկմանը մասնակցեցին Ս.Պետրոսյանը,Ս.Թադևոսյանը, Գ.Աղաբաբյանը,Ա.Աբգարյանը:

Քննարկումն ամփոփեց մարզպետ Ս. Սահակյանը:

Քննարկվող հարցի վերաբերյալ ընդունվեց որոշում՝

Հանձնարարել

1. ԸԿԵԻՊ բաժնին՝ կատարել լրացուցիչ ուսումնասիրություն առողջական խնդիրների պատճառով կրթությունից դուրս մնացած երեխաներին տնային կամ ներառական ուսուցման մեջ ընդգրկելու համար:
2. ԸԿԵԻՊ բաժնին՝ շարունակել խնամակալության և հոգաբարձության մարմինների հետ համագործակցությունը կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և կրթության մեջ ընդգրկելու նպատակով:
3. Մարզպետարանի աշխատակազմի ԸԿԵԻՊ,կրթության բաժիններին, առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը՝ կատարել համատեղ տունայցեր կրթությունից դուրս մնացած երեխաների ընտանիքներ, սոցիալ-հոգեբանական կարիքների գնահատում, պարզել, թե քանի երեխա ունի սայլակների, հենակների, այլ օժանդակ պարագաների կարիք:Անհրաժեշտության դեպքում երեխաներին ուղեգրել մանկական վերականգնողական կենտրոններ, սոցիալական աջակցության հարցերի վերաբերյալ լուծումներ գտնել:
4. Հանձնաժողովի քարտուղար տ-ին Գ. Դանիելյանին՝ հետևել հանձնարարությունների կատարման ընթացքին և արդյունքների մասին զեկուցել ս/թ դեկտեմբերի:

Հանձնաժողովի նախագահ՝

Ս. Սահակյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Գ. Դանիելյան